



ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 49-Ա

ք. Երևան

«ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի մարտի 31-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, ինչպես նաև ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասով, 2025 թվականի մարտի 24-ին հեղինակազորված «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությանն (այսուհետ՝ Հեռարձակող կամ Ընկերություն) է հասցեագրել Հանձնաժողովի նախագահի թիվ Ե/01/03.1/247-25 գրությունը (այսուհետ՝ Գրություն):

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կարգավորող պետական մարմինը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «*նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումները հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն մինչև ընտրվող մարմնի լիազորությունների սրանձնման օրը, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը*»:

Հանձնաժողովը, ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերով, 2025 թվականի մարտի 24-ի թիվ Ե/01/03.1/247-25 գրությամբ Հեռարձակողից պահանջել է մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներկայացնել «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի 2025 թվականի մարտի 15-ից մինչև 23-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը:

Հեռարձակողը Հանձնաժողով 2025 թվականի մարտի 27-ին մուտքագրված գրությամբ հայտնել է, որ Առաջին Լրատվականը՝ 1in TV-ն (իրավաբանական անվանումը՝ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ), աշխատում է ուղիղ եթերի ձևաչափով, բոլոր եթերները զետեղված են

լրատվամիջոցի յուրօրյան էջում՝ <http://www.youtube.com/@1inTVArmenia/streams>: Ինչպես նաև Հանձնաժողովին տեղեկացրել է, որ 2025 թվականի մարտի սկզբից առ այսօր 1inTV-ն չի հեռարձակվել որևէ ցանցային օպերատորի միջոցով՝ տեխնիկական խնդրի պատճառով, որը, ըստ ամենայնի, կլուծվի եկող ամսվա ընթացքում:

Միևնույն ժամանակ, ավելի վաղ Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 12-ի թիվ Ե/01/03.1/212-25, 2025 թվականի փետրվարի 27-ի թիվ Ե/03/03.1/171-25 գրություններին չպատասխանելու, 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև 25-ն ընկած ժամանակահատվածի ծայնագրությունները չտրամադրելու և ծրագրի վերահաղորդման մասին գրությանն ի պատասխան Հեռարձակողը հայտնել է, որ արդեն իսկ պատասխանել է գրությանը, որ 1in.am-ը հեռարձակվում է Team ցանցային օպերատորի միջոցով: Նշված էլեկտրոնային գրությունը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարության պաշտոնական էլեկտրոնային՝ secretariate@tvradio.am հասցեին 2025 թվականի մարտի 13-ին:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի՝ վարչական մարմինը պարտավոր է բազմակողմանիորեն գնահատել բոլոր փաստերը և ապացույցները, այդ թվում՝ ձեռք բերված արտաքին աղբյուրներից:

Հետևաբար, Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման կողմից փաստական հանգամանքները պարզելու համար 17.03.2025 թվականին գրություն է ուղղվել «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲ և «ԹԻՄ» ՓԲ ընկերությունների տնօրեն Հայկ Եսայանին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն իրենց ցանցում այդ պահին «ՍԿԻՉԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը փաստացի վերահաղորդելու վերաբերյալ:

Ի պատասխան Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 17-ի թիվ Ե/03/03.1/229-25 գրության՝ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը 2025 թվականի մարտի 21-ի թիվ 06/25 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 17.03.2025 թ.-ի № Ե/03/03.1/229-25 գրության, տեղեկացնում ենք, որ «ՍԿԻՉԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով այս պահի դրությամբ վերահաղորդվում է առավելագույն քանակությամբ տեսալսողական ծրագրեր պարունակող սակագնային փաթեթներում (COSMO GiG, Cosmo 4 16500, Cosmo 4 9900 Regional և Combo 4 Max)»:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության պետի 2025 թվականի մարտի 31-ի զեկուցագիրը Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի առերևույթ խախտման վերաբերյալ և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 31-ին հարուցել է թիվ 10 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի ապրիլի 02-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում 2025 թվականի ապրիլի 11-ին Հանձնաժողովը մուտքագրված դիմումով Հեռարձակողը հայտնել է հետևյալը.

«(...) Վերոնշյալի վերաբերյալ ցանկանում ենք հայտնել, որ Ձեր կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան պատասխանել ենք, որ մեր կազմակերպությունն աշխատում է ուղիղ եթերի ձևաչափով, և բոլոր եթերները զեպեղված են լրատվամիջոցի յուրօրյան էջում, ներկայացրել ենք համապատասխան հղումը, որը և պարունակում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի պահանջված տեղեկությունը...

(...) Անդրադառնալով մեր կողմից ենթադրաբար ոչ հավաստի տեղեկություն փոխանցելուն, մասնավորապես այն մասին, որ մարտի 3-ից առ այսօր 1in TV-in չի հեռարձակվել որևէ ցանցային օպերատորի միջոցով ցանկանում ենք հայտնել հետևյալը.

Ըստ էության տեղի է ունեցել տերմինաբանական շփոթ՝ մասնավորապես «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը Ձեր 2025թ. մարտի 17-ի հարցմանն ի պատասխան հայտնել է, որ այս պահի դրությամբ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է:

(...) տեսալսողական ծրագրով վերահսկվող բովանդակությունը Մեր ապրանքային նշանով կարմիր էկրանն է (մարտի 3-ից առ այսօր մեր կողմից որևէ բովանդակություն չի ուղարկվել, ուստի նշված ժամանակահատվածում եղել է դատարկ էկրան): Այսինքն, անկախ այն հանգամանքից, թե որևէ բովանդակություն հաղորդվում է թե ոչ, միայն այն փաստը, որ առկա է «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» լոգոյով դատարկ էկրան միևնույն է դա համարվում է վերահաղորդում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ մեր կողմից որևէ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն չի ներկայացվել, այլ պարզապես տեղի է ունեցել տերմինաբանական թյուրըմբռնում:»

Հեռարձակողն իր դիմումին կից ներկայացրել է «ԹԻՄ» ՓԲ ընկերության 2025 թվականի ապրիլի 07-ի թիվ 07/25 գրությունը՝ ուղղված Ընկերությանը, որտեղ ասվում է.

«(...) համաձայն «ԹԻՄ ՓԲԸ և «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ.-ին կնքված պայմանագրի՝ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով Ձեր կողմից նշված ժամանակահատվածում վերահաղորդվել է Ձեր կողմից ուղարկված բովանդակությամբ (անկախ բովանդակության ակտիվ կամ պասիվ լինելու հանգամանքից): Նշենք, որ մեր կողմից բովանդակության վերահսկում, դիտարկում և (կամ) փոփոխություն չի իրականացվում:

Հաշվի առնելով, որ չունենք վերահաղորդման դադարեցման մասին ծանուցում, տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է նաև այս պահի դրությամբ:

Միևնույն ժամանակ արձանագրում ենք, որ այս պահին (07.04.2025թ.) «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրով վերահաղորդվող բովանդակությունը Ձեր ապրանքային նշանով կարմիր էկրանն է:»

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված և ներկայացված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

1. 2025 թվականի մարտի 30-ին անցկացվեց Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ընտրություններ: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը մարտի 15-ից 28-ը մինչև ժամը 24:00-ն էր:

2. Հանձնաժողովն Օրենքով վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու ժամանակահատվածում Հեռարձակողից Հանձնաժողովի նախագահի Գրությամբ պահանջել է մինչև 2025 թվականի մարտի 28-ը ներկայացնել «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի մարտի 15-ից մինչև 23-ն ընկած ժամանակահատվածի ծայնագրությունը:

3. Մինչ այդ Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի 12-ի թիվ Ե/01/03.1/212-25 գրությամբ պահանջվել է նաև հայտնել, թե որ ցանցային օպերատորների միջոցով է Հեռարձակողի «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում: Ի պատասխան Հեռարձակողը հայտնել է, որ հեռարձակվում է Team ցանցային օպերատորի միջոցով: Այնուհետև, 2025 թվականի մարտի 27-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ ՄԳ/415-25 գրությամբ Հեռարձակողը հայտնել է, որ 2025 թվականի մարտի սկզբից «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը չի հեռարձակվել որևէ ցանցային օպերատորի կողմից:

4. Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 17-ի թիվ Ե/03/03.1/229-25 գրությամբ դիմել է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲ և «ԹԻՄ» ՓԲ ընկերություններին հայտնելու՝ արդյոք իրենց ցանցում այդ պահին փաստացի վերահաղորդվում է Հեռարձակողի «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը: Ի պատասխան «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը հայտնել է, որ «ՍԿԻՋԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով այս պահի դրությամբ վերահաղորդվում է առավելագույն քանակությամբ տեսալսողական ծրագրեր պարունակող սակագնային փաթեթներում (COSMO GiG, Cosmo 4 16500, Cosmo 4 9900 Regional և Combo 4 Max)»:

5. Հարուցված վարչական վարույթի ընթացքում՝ 2025 թվականի ապրիլի 11-ին, Հեռարձակողը Հանձնաժողով մուտքագրված դիմումով հայտնել է, որ ըստ էության տեղի է ունեցել տերմինաբանական շփոթ, թյուրըմբռնում:

6. Հարուցված վարչական վարույթի ընթացքում՝ 2025 թվականի ապրիլի 11-ին, Հեռարձակողը Հանձնաժողով մուտքագրված դիմումին կից ներկայացրել է «ԹԻՄ ՓԲ ընկերության 2025 թվականի ապրիլի 07-ի թիվ 07/25 գրությունը՝ ուղղված Ընկերությանը, որտեղ, ի թիվս այլնի, նշված է.

ա) (Team TV) հավելվածի միջոցով Ձեր կողմից նշված ժամանակահատվածում վերահաղորդվել է Ձեր կողմից ուղարկված բովանդակությամբ (անկախ բովանդակության ակտիվ կամ պասիվ լինելու հանգամանքից):

բ) Նշենք, որ մեր կողմից բովանդակության վերահսկում, դիտարկում և (կամ) փոփոխություն չի իրականացվում:

գ) Հաշվի առնելով, որ չունենք վերահաղորդման դադարեցման մասին ծանուցում, տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է նաև այս պահի դրությամբ:

դ) Այս պահին (07.04.2025 թ.) «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրով վերահաղորդվող բովանդակությունը Ձեր ապրանքային նշանով կարմիր էկրանն է:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը Հանձնաժողովի պահանջած տեղեկատվությունը՝ ցանցային օպերատորի «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդելու փաստի վերաբերյալ, ներկայացրել է ոչ հավաստի կամ ոչ ամբողջական:

Քննարկվող համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությանը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Ջանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը, կարգավորող

պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 15-րդ, 18-րդ, 23-րդ և 27-րդ կետերը սահմանում են հետևյալ հասկացությունները.

«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

տեսալսողական մեդիաձառայություն մատուցող(այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագրած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

ցանցային օպերատոր՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

տեսալսողական տեղեկատվություն՝ հաճախականություններով և հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց և այլն) սպառողներին տրամադրվող տեսալսողական նյութ, ներառյալ՝ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսություն).

տեսալսողական ծրագիր՝ Հեռարձակողի նախապես կարգավորած հաջորդականությամբ տեսալսողական նյութեր.

հեղինակագրում՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում.»::

վերահաղորդում՝ այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչև դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետևանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված) տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը.»::

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Լիցենզիան կարգավորող պետական մարմնի տրամադրած փաստաթուղթ է, որը թույլ է տալիս՝

3) ցանցային օպերատորին վերահաղորդել Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողների և օտարերկրյա հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ սույն օրենքով և օրենսդրությամբ սահմանված դեպքերի:»

Հանձնաժողովն արձանագրում է, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը 2020 թվականի հուլիսի 14-ից (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն) Հանձնաժողովի կողմից տրամադրած ԿՀ N 281 լիցենզիայի հիման վրա իրավունք է ստացել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացնել ցանցային օպերատորի գործունեություն՝ վերահաղորդելով Հեռարձակողի տրամադրված տեսալսողական ծրագրերը:

Օրենքի տրամաբանությունից հասկանում ենք, որ վերահաղորդումն իր մեջ ներառում է ձայնագրված և (կամ) տեսագրված տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը:

Հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ Հանձնաժողովն արձանագրում է:

2025 թվականի մարտի 21-ին թիվ 06/26 Հանձնաժողով հասցեագրված գրությամբ «ԹԻՄ» ՓԲ ընկերությունը հաստատել է, որ «ՍԿԻՉՔ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով այս պահի դրությամբ վերահաղորդվում է առավելագույն քանակությամբ տեսալսողական ծրագրեր պարունակող սակագնային փաթեթներում (COSMO GiG, Cosmo 4 16500, Cosmo 4 9900 Regional և Combo 4 Max):

«ԹԻՄ» ՓԲ ընկերությունը շուրջ հինգ տարի հանդիսանում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով լիցենզավորված անձ և լիազորված է վերահաղորդելու ինչպես Հայաստանի Հանրապետությունում գործող, այնպես էլ օտարերկրյա հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, որպիսի պարագայում պարտավոր է տիրապետել «վերահաղորդում» հասկացության բովանդակությանը: Ուստի Հեռարձակողի այն պարզաբանումը, թե ցանցային օպերատորն իրականացնում է վերահաղորդում, երբ փաստացի իրականացվում է միայն ապրանքային նշանով կարմիր էկրանի հեռարձակում, և տեղի է ունեցել «տերմինաբանական շփոթ», չի կարող համարվել հիմնավորված:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Հեռարձակողի 2025 թվականի ապրիլի 11-ի դիմումին կից ներկայացված «ԹԻՄ» ՓԲ ընկերության գրությանը և փաստել, որ այդ գրությունը չի կարող հիմք հանդիսանալ ապացուցելու, որ 2025 թվականի մարտի 15-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով չի վերահաղորդվել:

Այնուհետև, «ԹԻՄ» ՓԲ ընկերության գրությունից պարզ է դառնում, որ Հեռարձակողը չի ներկայացրել վերահաղորդումը դադարեցնելու մասին ծանուցում, և նշված ժամանակահատվածում այն վերահաղորդվել է ըստ ուղարկված բովանդակության: Հանձնաժողովն այս ժամանակահատվածում չի ստացել նաև «ԹԻՄ» ՓԲ ընկերության ծանուցումն իր ցանցում Հեռարձակողի որևէ բովանդակության դադարեցման մասին:

Հետևաբար արձանագրում ենք, որ ողջ նախորդիվ նշվածը գալիս է ապացուցելու միայն այն, որ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով վերահաղորդվում է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար: Այսպիսով, վարչական մարմինն է գնահատում գործի շրջանակում առկա ապացույցների համակցությունը: Այդ թվում՝ եթե կան հակասող ցուցմունքներ կամ տեղեկություններ, մարմինը համադրում է դրանք և նախապատվությունը տալիս առավել հավաստի, պաշտոնական կամ երրորդ կողմի աղբյուրից ստացված տվյալներին: Քննարկվող վարչական վարույթի շրջանակներում երրորդ կողմի աղբյուրից ստացված տվյալը «ԹԻՄ» ՓԲ ընկերության 2025 թվականի մարտի 21-ին Հանձնաժողով հասցեագրված թիվ 06/26 գրությունն է:

Ավելին, այս համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողի կողմից ներկայացված «ԹԻՄ» ՓԲ ընկերության գրությամբ հաստատվում է այն, որ ի հակառակ Հեռարձակողի պնդմանը՝ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է այդ պահի դրությամբ (07.04.2025թ.) ԹԻՄ ԹԻՎԻ հավելվածի միջոցով:

Հեռարձակողը հանդիսանում է վարչական վարույթի մասնակից կողմ և նա

- կարող է ներկայացնել պարզաբանումներ, փաստաթղթեր, դիտարկումներ,
- կարող է վիճարկել վարչական մարմնի գործողությունները,
- բայց չի կարող իրավական գնահատական տալ այլ մասնակիցների կամ երրորդ անձանց գործողություններին, այդ թվում՝ ցանցային օպերատորի:

Հանձնաժողովը ևս մեկ անգամ նշում է, որ Հեռարձակողը որևէ կերպ իրավասու չէ գնահատական տալու ցանցային օպերատորի գործողություններին կամ դրանց իրավաչափությանը: Հեռարձակողը կարող է հայտնել իր տեսակետը, տալ պարզաբանում, սակայն ցանցային օպերատորի գործողություններին իրավական գնահատական տալը դուրս է իր իրավասություններից: Այդ գնահատականը պատկանում է բացառապես վարչական վարույթն իրականացնող վարչական մարմնին, որն ունի ապացույցների գնահատման ու որոշում կայացնելու լիազորություն:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով և գնահատելով վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացված ապացույցները, արձանագրում է, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերության կողմից վերահաղորդվում է «ՍԿԻՉԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը Թիմ Թիվի (Team TV) հավելվածի միջոցով:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, ինչպես նաև այն, որ կողմերի միջև առկա է 01.02.2021 թվականին կնքված պայմանագիր, և Հեռարձակողը «ԹԻՄ» ՓԲ ընկերությանը չի ծանուցել նշված տեսալսողական ծրագրի վերահաղորդման դադարեցման մասին, ուստի Օրենքի կարգավորման տրամաբանության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդվել է:

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կարգավորող պետական մարմինը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը սահմանում են.

«Նախընտրական քարոզչությանը վերաբերող տեսալսողական հաղորդումները հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը:

Տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:»:

Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող պետական մարմին, Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է Հանձնաժողովի նախագահի կողմից գրավոր հարցման ձևաչափով:

Քննարկվող հարցի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությունը Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ թիվ 130-Ա որոշմամբ հանդիսանում է հեղինակագործված իրավաբանական անձ, ունի Հեռարձակողի կարգավիճակ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, ինչպես նաև վերջիններս խախտելու դեպքում սահմանված կարգով կրել պատասխանատվություն:

Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ: Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները: Ավելին, նշված նորմը կրում է իմպերատիվ (պարտադիր) բնույթ, այսինքն՝ Հեռարձակողի կողմից ենթակա էր պարտադիր կատարման. կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն պարտավոր էր ներկայացնել սահմանված ժամկետում, հավաստի և ամբողջական, սակայն Հեռարձակողը ներկայացրել է ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն, ինչը հանդիսանում է իրավական տեսանկյունից պատասխանատվություն ենթադրող արարք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:»:

Հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 28-ի նիստում Հեռարձակողը, իրացնելով Սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ լսված լինելու իր իրավունքը, հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ներկայացրեց իր փաստարկներն ու ապացույցները: Քանի որ լսված լինելու իրավունքը միայն ձևական առումով չպետք է իրացվի, այլ բովանդակային առումով, ուստի Հանձնաժողովը, Ընկերության ներկայացուցիչների միջնորդությունը բավարարելով, հետաձգեց նիստը 2025 թվականի մայիսի 05-ին, ժամը 14:00-ին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են.

«1. Վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին:

2. Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորությունը պետք է տրվի համապատասխան դիմումը ներկայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում:

Վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերից կարող են կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:»:

Հեռարձակողը 2025 թվականի ապրիլի 30-ին Հանձնաժողով դիմում է ներկայացրել՝ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթի նյութերին ծանոթանալու խնդրանքով:

2025 թվականի մայիսի 02-ին ժամը 16:57-ին Ընկերության ներկայացուցիչ Վարդուհի Պավելի Բարսեղյանը տեղում՝ Հանձնաժողովի գտնվելու վայրում՝ Իսահակյան 28 հասցեում, ծանոթացել է վարչական վարույթի գործերին և բջջային հեռախոսի միջոցով նկարել նշված վարչական վարույթի նյութերը:

Հեռարձակողը 2025 թվականի մայիսի 05-ին Հանձնաժողով է ներկայացրել իր Դիրքորոշումը և կից ապացույցները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով և գնահատելով ներկայացված ապացույցները, ևս մեկ անգամ արձանագրում է, որ «ԹԻՄ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված գրությունները փաստում են այն մասին, որ «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության «ԱՌԱՋԻՆ ԹԻՎԻ» տեսալսողական ծրագիրը ԹԻՄ ԹԻՎԻ (Team TV) հավելվածի միջոցով վերահաղորդվել է:

Ավելին, 2025 թվականի մայիսի 05-ին տեղի ունեցած վարչական լսումների ընթացքում որպես ապացույց է ներկայացվել Հեռարձակողի և «ԹԻՄ» ՓԲ ընկերության միջև գրագրությունը, համաձայն որոնց՝ Հանձնաժողովը բացահայտված է համարում Հեռարձակողի կողմից «ԹԻՄ» ՓԲ ընկերությանն ուղղված հարցադրումները, հիշյալ գրության բովանդակությունը, և Հանձնաժողովին պարզ է, որ հարցումը վերաբերում է 2025 թվականի ապրիլի 07-ի դրությամբ¹:

Հեռարձակողի կողմից ներկայացված Դիրքորոշմանն անդրադառնալով՝ արձանագրում ենք հետևյալը.

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի ընթացքում, ինչպես նաև քննարկվող հարցի համատեքստում հրավիրած նախորդ նիստի ընթացքում հաստատել է, որ Ընկերության կողմից ներկայացված յուրօրյան հղումն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու համատեքստում բավարար է: Այս պարագայում կարևոր է արձանագրել, որ Արձանագրությունը հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, սակայն կարող է ծառայել որպես ապացույց: Ստացվում է, որ Օրենսդիրը հստակ տարանջատել է, թե ինչ է նշանակում պարտադիր հիմք ծառայել վարչական վարույթ հարուցելու համար, և դիսպոզիտիվ՝ կարող է ծառայել որպես ապացույց: Ամփոփելով Դիրքորոշման հիշյալ հատվածը՝ արձանագրում ենք, որ Ընկերության առաջին եզրահանազումը հիմնավոր չէ:

Ինչ վերաբերում է ակտիվ կոնտենտ-բովանդակություն չտրամադրելուն-հաղորդելուն՝ Օրենքի կարգավորման համատեքստում առկա չէ ակտիվ կամ պասիվ կոնտենտ-բովանդակություն վերահաղորդել-չվերահաղորդել տրամաբանությունը: Ավելին, տեխնիկական պատճառով վերահաղորդում չիրականացնելու համատեքստում որևէ կերպ չէին կարող վերահաղորդվել Ընկերության տարբերանշանը և կարմիր էկրանը:

Ավելին, Օրենքը կարգավորում է, թե ինչ է ասել վերահաղորդում իրականացնելը և այն դադարեցնելը, ինչպես նաև սահմանում է այս ողջ իրավական գործընթացի ճանապարհը: Փաստացի առկա է Օրենքով սահմանված վերահաղորդում, սակայն բացակայում է Օրենքով սահմանված կարգով վերահաղորդման դադարեցում. քանի դեռ չկա այս գործընթացը, Հանձնաժողովը չի կարող հաստատված համարել, որ քննարկվող համատեքստում գործ ունենք չվերահաղորդվող տեսալսողական ծրագրի հետ:

¹Տե՛ս, «ԹԻՄ» ՓԲ ընկերության պատասխանը՝ գրություն էլք N 07/25, 07.04.2025՝ ստորագրված Կոմերցիոն տնօրեն Արամ Բարսեղյանի կողմից:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ հոդվածի՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հանձնաժողովը ևս մեկ անգամ արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված յուրօրյան հղումը ընդունել է հիմք և իրականացրել վերահսկողական իր գործառույթները, որպիսի պարագայում քանդվում է այն պնդումը, թե Հանձնաժողովը ձևական պահանջներով ծանրաբեռնել է Ընկերությանը:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագործան կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագործան կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասը սահմանում է.

«27. Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ և 11 մասերը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՍԿԻՁԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2025թ. մայիսի 05
ք. Երևան